սառնորակ և զուլալ աղբիւրներ, որոնք կանաչազարդ ծառերի փէշերից պտոյտներ գործելով՝ կազմում են փոքրիկ առուներ և ապա միանում գետակի հետ, որն ընկած է գիւղի արևմտեան կողմը. դա սկիզբն է առնում Նամակերտից և օձապտոյտ հոսելով՝ ոռոգում է Ղառղունի դաշտավայրերն և ապա թեքւում դէպի Սվարան գիւղը։ Այս բոլորը գիւղին տալիս են աւելի լաւ գիւղի տեսք և գեղեցկութիւն։

Գիւղի հիմք գցողները կազմում են 1606 թւին Շահ-Աբբասի ձեռքով Հին—Զուղայից գաղթողների մի մասը. նրանք երկրագործ ժողովուրդ են, աշխատասէր և ընդունակ, բացի երկրագործութիւնից պարապում են նաև անասնապահութեամբ և մասամբ էլ այգեմշակութեամբ։ Այժմ բաղկացած են 118 տնից 865 շնչով, որի 443-ը արական է և 422-ը իգական։ Տները շինուած են հողից և ծեփուած յարդով շաղախուած ցեխից. նրանք ընդհանրապէս մի յարկանի են և շինուած են կողք-կողքի։

Հողատիրութեան տեսակն «առբաբի»—կալուածատիրական է. պատկանում է Մամթաղի (Զրաղալի խանի թոռը), Զադիգանցի Սարհանկ խաներին և Ցարութիւն Խաչիկեանի ժառանգներին, որոնց մէջ բաժանուած է հողը*։ Գիւղացիներից միայն վեց տուն հող ունին, իսկ մնացեալները հողազուրկ ռայեթներ են. նրանք մշակում են աղաների հողերը և իրենց ստացած արդիւնքի $^1/_3$ մասը տալիս են նրանց. 506 թուման էլ պետական հարկ են վճարում։ Բացի այդ Մամթաղին և Սարհանկը բռնութեամբ առնում են խեղճ գիւղացիներից տարեկան նաև ապօրինի հարկեր։ Որպէս զի գաղափար տանք, թէ որքան ծանր է այդ հարկը, տանք մի փոքրիկ հաշիւ. 1917 թւին վճարում են ապօրինի հարկ 45 թուման փող, 1000 լիտր յարդ, 360 լիտր գարի, 504 քեռ եօնջա, իւղ, պանիր, վառելիք և այլ իրեր։

Հողը բարեբեր է և արգաւանդ. հերկում են արօրով։

---

* Նոր—Զուղայի կանանց Բարեգործ. Ընկերութիւնն և Ս. Ամենափրկչ. Փոքրիկ դիշերօթիկ դպրոցն ևս մի-մի հաբրայ հող ունին այս գիւղում։